

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ԶԱԿՈՐԱՅ

Թ

Մարտիրոս Կաթագի Պատրիարք Կ. Պոլսոյ՝
առ Եղիազար՝ Կ. Պոլիս:

Արդոյազանի և վեհագան բարեւոյնոյ մեծի բարերարիդ իմոյ սիրով աստուածա-կանաւն յուշ առնեմ սրբոյդ, զի թէպէտ մտերմաբար ցայս է՛ր յետնեալս առ երես ցոյցեալ զհնազանդութիւնն և ի Տեառնէդ բազում անգամ ընկալեալ սէր և զտեալ շնորհս, սակայն արդեանս լրիւ ծանեալ զծանեալս վաղապէս՝ զողո՞ւն չափ և ան-ջրելի ունել զշաղկապ սիրոյ առ ծառայ քո և որդի. և այս մի՛ և մի լիցի ծանիլ կեղ-ծիւք և առ աշօք և կամ այլ իմն կերպիւ, որպէս և ի հերուն հետէ սրտի իմոյ ուտի-կան և բարեւոյս տեղեակ խկէ սրբութիւնդ Որովհետեւ այս է յառեցում երկոցունցս. նա՛ որպէս և եղեալ էի և եմ և եղէց ան-ձամբ մինչ ցորոշումն շնչոյ ի վերայ ճշմա-րիտ բարեկամիդ սրբոյ՝ աղօթիւք վեհիս մինչ ի մահ ընդ ընդարոյս սիրով ծառա-յելոյ պատրաստ կեամ սրբութեանդ, և յերկուց սուրբ աթոռոցն Սուրբ Էջմիածնայ և Սուրբ յերուսաղէմայ Սուրբ Գերեզմա-նին և սրբոց բնակութեանցն այլոց ևս հնազանդութեան կամ Աստուծով քեզ: Ահա՛ իմոյ սրտի եղնալ պարոյրն եղի առաջի սուրբ հօրդ խոստովանաբար. եթէ գործայց աստի և կամ ի քէն գարծայց, և ես ի Քրիստոսէ՛ առաջի Աստուծոյ և մարդ-կան ամօթ եղէց: Բայց զայն խնդրեն բարեւք է, ապա ուշիւ մտօք ի միտ առ, հայր սուրբ, զայս եւեթ այժմ հրաման իմ լիցի հրամանու քով սակս նուիրակաց, յորժամ զրամն ի քակի գայցէ, տեսցուք թէ յորո՞ւմ պատշաճ իցէ և ո՛րն հարկա-ւոր՝ նմա առից կրկին հրամանաւ սրբոյդ: Երկրորդ խնդիր իմ ի քէն այս է, հայր սուրբ, քո սրտիդ զկիրս պատգամաւորացն մի՛ յայտնեցես. երթեկէքն յարաբար-դելով, զհին չարութիւն ի սրտի ունելով՝ խօսք տարցեն և բերցեն, մի՛ աւատասցես մարդոց ի ժամանակիս, զի սատանայ են. այնպէս բան լիցի խօսելոյ, ազգ արա աջինք ծառայի ձերոյ, զի կեկալ բերան առ բերան խօսեցայց. մէկ քանի օրս մալ-զաթան սաւմիշ անեմք, խօսք և բան չատ

կայ հրամանուցդ յայտնի. ժտելով ժտեմ՝ զսիրտ քո ի սրտէ իմե՛կ մի՛ հեռացուցա-նել, մի՛ լիցի յօղաւորն այլ և ներարա-մաղիրն, որպէս և իմա լիցի, զի ես սուտ եմ, ոտից մինչև ներբանս ծառայ լիցիմ քեզ ողւոր իմով մինչ ի մահ. վասն զի այն օրն աւատացաք, ևս այսու ձեռագրովս հրամանքդ այլ աւատա՛, աւատա՛ որ ստոյգ ծառայ և որդի քո եմ այսուհետեւ մինչ ի մահ: Ողջ լի՛ր, ողջունեալդ ի Հոգւոյն Սրբ-ոյ: ԹՎին ՌՃԹ (= 1660) սեպտեմբերի Թ. Սուրբ Դէորդ եկեղեցւոյ մէջն:

Ժ

Մարտիրոս վրդ. Կաթագի՝ Կ. Պոլսէն,
առ Եղիազար Այնթապցի՝ յերուսաղէմ:

Կերպարտիւ և տիեզերաբաղձ, բազ-մերջանիկ և ամենագով Տեառնդ Եղիազար Սրբազան Վեհի և իմա հիփացելոյ տեղի պարծանաց նշուատ որդեկէ քուժմէ պի-տակ Մարտիրոսեայ Կաղարացւոյ ընկալցիս երկրպագութիւն և համբոյր շնորհաբաշխ աջոյդ սրբոյ հոնդերձ քրիստոսապարզեւ ողջունին սրբարարու. և ընդ նմին հաւ-ցումն զօրպիսութեանց և զկրից միանգա-մայն ցայդ վայր, զոր Տէր ի հաճոյս իւր ընկալցի և պահեսցէ անսայթաք և ան-վրէպ ամենայն հաղրից թշնամոյն ի փառս իւր և ի պարծանս մեր. ամէն:

Եւ ընդ զոյդն անյարմար զծոյս յուշ լիցի երանեալ անձինդ՝ եթէ զմէնջ գիտել կամ լիցի սիրելւոյդ, ահա կեաք ի նիկի-ոնն քաղաք ըստ հրամանի Տեառնդ և ըստ մերս խոստման, բազում երկք և վիշտք կրելով յաղազս ձմերանն խստութեան և սառնամանոյն՝ եռապատիկ քան զձերդ, զի ի լրոյ համբաւոյն այսպէս կշուիր. բայց մի՛ լիցի այն ևս միննէթ ըստ առասպելի ուրում՝ Այնչափ ձիւնն գայլուն, սա այլ հետ այլուն: Ապա ունիմ ընդ Տեառնդ փոքր ինչ վէճ սիրախառն. զի՞ է այս որ ի զիպին քո աստ՝ սակս մեր գալստեանն թուլագոյն բանիւք խտրմալաթէ տրւեալ իրր ապահարդան ի ձեռին ունին այժմ թէ՛ սոքա և թէ՛ սոցին տեսուչ ձեացեալ քօշ մօրուքն այն. դու ինքնին այժմ վկայ եւ ոստիկան սրտի իմոյ խոկ ես, որ բնուին զրամէ և փողից զատարկացեալ էի և վասն հարկի սրբութեանդ և մեր զրադաղերձ ա-զատմանն յանձն առաք զոր ինչ և հրա-

մայեցներ կտտարել ծառայաբար. և վասն ճանապարհին ծախոյ՝ վկայ է Տէր, որ ձի (120) զուրուշ պարտօք հազիւ հասաք աստ՝ յամիալ ի ճանապարհն ին օր, եւ ի շարաթ օրն Սահակայ Պարթևի մտաք ի Ղոնեա եւ գտաք աստ զվերոյիշեցեալ անտես բարեկամն քո: Զկիրակէի առաւօտեայ հսկումն ի միտսին կատարեալ, մեծարեալ եղեաք ի ճաշ Առաքելի տունն, և զգիշերն մեք անդ յօթեալ, նա դարձաւ ի խոցն և երկուշարաթեով աւուր կոչեաց զմեզ առ ինքն, զի բարեաւ մնալ արասցէ. քանզի յառաջ քան զմեր գալուստն զնըւիրակութեան զրամն քէսիմ արարեալ և զնացեալ էր, բայց սակա խտտութեան օգոյն կրկին դարձեալ էր այսր: Եւ իբրեւ զնացաք առ ինք խոնարհօրէն՝ թէ զի՞նչ հրամայեա, հայր. գտաք զինքն յագ եւ յիզի և անօթք սեղանոյն ի հաւաքումն. ետ պատասխանի խրոխտաբար՝ թէ դու վասն որոյ իրի եկեալ ես աստ. և մեք զեղեալն հաւաստի պատմեցաք նմա՝ թէ այս ինչ կերպիւ եղիազար վարդապետն յղեաց մեզ աստ և այժմ կամ քո եղիցի, զոր ինչ և հրամայեցես: Եւ նա՝ թէ իմ հրամանն այս է, որ դու ոչ աստ և ոչ Անկուրիա բան չունիս. ո՛չ զքեզ կու գիտեմ և ոչ զեղիազարն, ես զիմ պարտս հատուցի առ ձեր մեծաւորն: Նոյն կերպիւ և ետ պատուէր տեղւոյս երեկեացն առնել որպէս և ինքն հոսեաց: Այսու բանիւ վտարեալ կորեաւ. մեր առաւել խոնարհութիւնն կարի հպարտութեան պատճառ եղև նմա. ունի տակ՝ թէ զի՞նչ եղև ձեզ, թող երկու տարի բոլորէ և այլ բազում հաջմունս, զոր ոչ արժէ լսելիք մարդոյ աղճատել: Զի՞նչ առնեմ, կարի և զիւր էր ինձ զթաթաութիւնն ի դորձ ածել և զչափ անձինն զիտացուցանել, և կամ զայս հինգ քաղաքի երկու տարեան իրաւունքն տակոսիւ հատուցանել տալ. ապա Աստուած ազատէ զմարդն ի քո լեզուէդ, յորոյ քաղաքի լուռ եւեթ անմոռնչ դարձաք յետս: Այնքան խելագարեցաւ, մինչ զի փոքրաւորացս չնօրէն կոչմունս ո՛չ ո՛չ ձայնեալ վտարեցաւ ի բաց, և այսու տրտմութեամբ դարձաք ի տուն մահուսի Առաքելին: Եւ եկեալ առ իս աւագ էն զնոյնն կամէր արձանացուցանել՝ թէ մեք խնդիր արարաք յեղիազար վարդապետէն, նա մեզ չնորհեաց,

մեք մարդոյ բան տըւող չեմք. և յայնժամ փոքր ինչ զեկուցի նմա զնետողութիւնն՝ Դաւթեանն գաւազան արկեալ ի կիր. և ապա եկեալ քէթխօտայք, ամփոփեցին զմեզ ի հիւրանոցի իւրեանցն, որ է մերձ ժամատանն սրբոյ: Եւ զկնի զնացիցն մեր ի խոց եկեղեցւոյն, միւս օրին եկն եհաս ի ձէնջ ծրեալ փոքր գիրն այն մեղադրանաց ի զէմս Առաքելի և այլոցն, զոր տեսեալ զայն փոքր ինչ յամօթի հարան. և եմք զեռ ևս անմոռնչ. միթէ Աստուած զվերջն ի բարին կատարեցէ: Փետրուարի Ի. ն զրեցաւ ի Դ. յուր (1661):

Եւ սակա յաճախութեան խօսից և բանին թերին լնլոյ յաղագին անմեղադրելի լիցի աստ գրելս իմ զմնացեալն: Ահա ըզտեղւոյս որպիսութիւնն ծանուցի վեհի Տեառն՝ թէ զինչ և իցէ աղէկ կամ վատ՝ սոցա բանն կու հոգամք Աստուծով, բայց խնդիր մեր վասն սոցա այդ լիցի սիրելւոյդ՝ զի մի՞ նեղսրտեալ բարկացիս կամ վատ ինչ ասացես, զի բաւ է մերս սաստ և նեղութիւն, բայց ի քէն օրհնութիւն և սփոփումք լիցի ըստ Տեառն բանի: Ապա վասն քօշվօրվաց(?) ոչ առնեմ զայս խընդիր, ընդ նմա զոր ինչ մարթն է քեզ առնել՝ դու լուռ կու գիտես ոչ թէ ես, և եթէր արհամարհութիւնն այն, այլ մեծի Տանն սրբոյ և մեր լուռ լինելն վասն քո խաթիր և սրբաւոյս մեռոնին, և այլն յայտ է յոգնագլտիդ: Եւ արդ՝ զի՞նչ հրամայեա, զի ես այսուհետեւ յԱնկուրի գնացող չեմ, և թէ գնամ, զիտեմ զի մեծ իմն չփոթ լինելոց է ի մէջ մեր. վասն որոյ արգիլայ անտի, և թէ յԱտանու կողմունքն այլ մարդ չիցիս յղեալ, հրամայեա՝ զայն եւս տեսցուք և անտի չուեսցուք ուր եւ կամեսցիս դարձեալ, զի ես սպասեալ մնամ աստ, մինչև եկեսցէ զիր հրամանի քո: Եւ եթէ ի Տուն Տիգրանայ (Տիգրանակերտ) ասիցես զնալ՝ այն ևս բարի. ապա զնորա պակասութիւնն եւ զպիտոյքն հոգացեալ յղեցես: Բայց վասն հոգեւոր տիրի սպասաւորութեանն, որպէս և հրամայեցիր՝ եմ ի պատրաստարանս. այս մեծի պատրաստութեան կարօտանայ և խնդրոյ, զի լոկ բանիւ պատերազմ ոչ վճարի, եւ ըստ Տեառն բանի պիտոյ է զծախքն հաշուել և ապա շինուածոյն ձեռն արկանել, ապա թէ ոչ կատակիմք բազմաց՝ թէ սկսան չի-

նեղ և ոչ կարացին կատարել. նախ՝ որ պատրաստութիւն պիտենայ, որպէս և հըրամանքդ քաջ գիտես, երկրորդ՝ որ կանուխ ժամանակ է, իսկի չէ վարդապետին յուզելը պիտ ապա ժամանի. ահա ունիմ ընդ իմ զՄարկոս էրէցն աստ և անդ յղեւոյ. Պետրոս եպիսկոպոսն ևս գալոց է, եթէ մարթնացի՝ սոցա մինն ուղարկեմ առ նա, տեսնելը զկամս նորա. յայսմ ամ զայ թէ ոչ, զայս ամենայն և այլ թէ ինչ իցէ պակաս ի մտաց մերոց, խնդրեմ հոգալ և թապալիր տեսանել. գիր մի աստ ի ձեռն ուղարկի շուտով հասուցանել և զայլն գիտեմ հրամանուցդ լիցի կամ մտաւայ քո, որպէս ուխտեալ է, կայ ի պատրաստ առ ի ծառայել մինչ ի մահ, և զու զոր ինչ ի միտ ամցես, զու քո հոգին: Եւ թէ զՊաշտոցոց բանն հարցանես, նո՛ յառաջին օրն մեծ աղմուկ եղև, մինչ զի չափուշ յղրկեցին յիւսկիւտար զՍուքիաս վարդապետն արգելլոյ և ոչ գտին, զի նա ի նոյն օրն կիրակի գնացեալ էր. յետոյ գնացին մօտ ի պատրիշն(*) իւրեանց՝ թէ մեր մեծն զու ևս, այլոց ինչ պարտիմք. նա տուեալ էր հրաման կատարել անխիղճ զմահ և զկեանքն յերկրեանցն. յետոյ այլք այլ իմն բան էին ասացեալ՝ թէ նորա արգելլելն քեզ չա՛ն է, զի զամենայն իրաւունքն նոցա քեզ է պարտ առնուլ աւերունի. երթեալն պակաս էր և զկնի մեր ոչ գիտեմ զինչ զործեցաւ. բաւեսցի այսքան: Գլուխ խոսքովեթեան, արբանեակ չարին, աստիճան դժոխոց և մեծ շունն բրտի և այլք նոցին հետեողք բազումք. և զկնի քոյոց գնացիլն Մինտէրճին և Սուրմէլին այլովն հոմանեօք իւրեանց յարեան ի վերայ մեր, զոր ինչ կայր ամբարեալ ի սիրտս իւրեանց՝ թօթափեցին ի պատճառ մնացեալ պարտուցն իմիրի: Նոյնպէս և Աստուածածնայ մէկ քանի շուն ըստ իւրեանց արժանւոյն ղօղանջեալ առին զառհաւատչեայս և գնացին. և չէհրի շունն պոյրուլթի ևս երեք յիւսկիւտար ի վերայ մեր. Աստուծով յայնմանէ ևս զերծաք. Բայց Մինտէրճի շան ազգ և ազգ հաջմանցն առ Վեհն մեր և առ մեզ ոչ լիցի ներել իբր զՍիմէի. եթէ ի մէջ զերծցի, Սողոմոնիւզ աղցուք զվրէժս ի նմանէ: Անմեղադիր լե՛ր, զի կարի շատ խօսեցաք ըստ բերման ժամուն: Ահա զՍարգիս վարդապետի գիրն ևս յղեցի, որ եկն առ իս յիւսկիւտար, ընդ սմին և զթղթարեք Սարգիսդ թէ ուղարկեցես առ մեզ զրիւ քոյով՝ կամ քո լիցի: Եւ ողջոյն բազում կարօտիւ լիցի առ եղբայր մեր և որդի Սուքիաս վարդապետիգ և ներսէս պատանի: Հրաւ.՝ Մ. Ե. Ն.

(*) Պատրիարքը բռն կ'ուզէ, որ է Ղազար Անթասացի: Ծ. 2.

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ս. Էջմիածնի Մայր-Աթոռոյ Տեղակալ Ամեն. Տ. Խորէն Սրբազան Ս. Աթոռոյ Սրբազան Պատրիարք Հայրը հրաւիրած է ներկայ գտնուիլ Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան, յատուկ պաշտօնագրով մը, զոր ընթերցողը կը տեսնեն ստորեւ: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի կողմէ նոյնիմաստ հրաւերի պաշտօնագրեր ուղղուած են նաեւ Ս. Աթոռոյ միաբան Տ. Տ. Մեսրոպ, Մկրտիչ, Մատթէոս եւ Սմբատ Սրբազաններու:

Պատճէն

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ Տ. ԹՈՐԳՈՄ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿԱՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆԻՆ

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ուրախ է հաղորդելու Ձերդ Ամենապատուութեան, որ Հայաստանի Կենտրոնական Իշխանութեան Բողոքական Գումարունիք Ազգային Եկեղեցական Ժողովի բացումը տեղի է ունենալու տարւոյս Նոյեմբերի 10 ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իւր պարտքն է համարում այս առիթով եւս խնդրելու Ձերդ Ամենապատուութեան նշանակեալ ժամանակին ժամանելու Մայր Աթոռ, անձամբ մասնակցելու Ազգային-Եկեղեցական Ժողովին:

Միանգամայն պետք է, որ պատիւ կ'ունենալ տարւոյս Նոյեմբերի 10 ին տեսնելու Ձերդ Ամենապատուութեան Մայր Աթոռում, խնդրում ենք մեկնելու և Բաթում հասնելու ժամանակի մասին տեղեկացնել:

Եղբայրական սիրոյ ողջոյններով և յարգանքներով

Տեղակալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ
Նախագահող Գերագոյն Հոգեւոր Խորհրդի
(Ստորագրութիւն)

Ազգային իրոյն ԱՐԲԵՊԻՍԿԱՊՈՍ

ՎԱՐՉԱԿԱՆ, ԺՈՂՈՎԱԿԱՆ, ԵՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Ս. Աթոռոյ Տեղիւն Ժողովը Յուլիս 4-31 ամսօրեայ ընթացքին տասնեւերեք անգամ գումարուեցաւ, իրրեւ զործադիր իշխանութիւն եւ վարչական մարմին, գրադելով եկեղեցական եւ վարչական եւ մանաւանդ Ս. Տեղեաց իրաւանց պահպանութեան եւ մատակարարական գործերու կարգադրութեամբ, իսկ իբր կրօնական տառնեւ, երեք անգամ գումարուելով, կատարեց ամուսնական եւ ժողովական խնդիրներու վերաբերեալ տնօրինութիւններ:— Տնօրէն Ժողովոյ անդամներէն Տ. Սմբատ Սրբազան եւ Տ. Տիրան վարդապետ պաշտօն ստացան, իրրեւ քննիչ, յատուկ կանոնագրութեան մը համեմատ, հսկել մատակարարութեան եւ պիտեւէի զործադրութեան վերայ: Նոյնպէս, Տ. Սիմոն վրդ. կարգուեցաւ կալուա-